ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ԳԻՏՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ, ՍՓՅՈՒՌՔԻ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

---

22 փերվարի 2023թ.

Հայաստանի Հանրապետության
վարչապետ պարոն Նիկոլ Փաշինյանին

Մեծարգո՛ պարոն Վարչապետ,

Նախօրեին Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեսյանի հետ Ազգային ժողովում հանդիպեցինք Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Արմեն Մելիքբեկյանին: Առկա մի շարք խնդիրներին առաջիկայում կտանք լուծումներ, սակայն մի հարցում կխնդրեի Ձեր միջամտությունը:

2019 թվականից մինչ օրս Հայաստանի մարզերում FIFA-ի կողմից կառուցվել է ավելի քան 90 արհեստական խոտածածկով խաղադաշտեր 20*40մ 16-20 մլն դրամ, ընդհանուր մոտ 2,2 միլիոն դոլար: Այս ծրագրով հայտ ներկայացրած համայնքները ՀՖՖ-ին պետք է վճարեին խաղադաշտի արժեքի մոտ 15 տոկոսը՝ որպես կառուցման իրենց մասնաբաժին, յուրաքանչյուրի դեպքում գումարը տատանվում է 2-3 մլն դրամ: Ցավոք, մինչ օրս մոտ 45 համայնք չի վճարել իր մասնաբաժինը, ընդհանուրի պարտքը կազմում է շուրջ 110 մլն դրամ: Ըստ ՀՖՖ նախագահի, FIFA-ն միայն այս տարի նույն պայմանով (85% FIFA-15% համայնք) պատրաստ է կառուցել ևս 30 նման խաղադաշտ, սակայն անհրաժեշտ է որպեսզի մինչև սույն թվականի փետրվարի վերջ համայնքների անունից վճարվի նախորդ ծրագրի պարտքը: Խոսել եմ մարզպետների հետ, երկուսի դեպքում եղան վճարումներ, սակայն ինչպես նշեցի, դեռևս կան համայնքներ, որոնք վճարումները չեն կատարել: Կարծում եմ, FIFA-ի ներդրումային այս ծրագիրը շահեկան է մեզ համար և արժե բաց չթողնել հնարավորությունը: Կից ուղարկում եմ նաև համայնքների ցանկը, շնորհակալ կլինեմ Ձեր աջակցության համար:

Միաժամանակ հայտնում եմ, որ տեղյակ եմ նաև մի քանի տեղի մասով որակի հետ կապված առկա խնդիրների մասին, որի վերաբերյալ ՀՖՖ և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հետ կարող եմ հանդիպում կազմակերպել:

Հարգանքով,

Հանձնաժողովի նախագահ ***Սիսակ Գաբրիելյան***